



39. ԲԵԴՈԼՎԱԹ ՏՂԵՆ

Ավալ ժամանակին ըլնում ա շիլնում մի թագավոր։ Էս թագավորը ունենում ա իրեք տղա։ Էս տղեքը քանի պուճուր՝ ին, զլիները դինչ ապրում ին, համա որ մենծանում են, իրանց յաշն առնում, էլ ոշրները մի առվով չի էթում։

Ասսու իրան օրը ուշունց, կոխի, ղալմաղալ, տուր ու դմիոց, մախլասի՝ էլ իրար հեննա յոլա չեն էթում։

Օրեն մի օրը զալիս են իրանց հորն ասում. — Թագա՛վորն ապրած կենա, շունքի իրար հեննա շենք կարում յոլա էթա, ուզում ենք բաժանվի, ի՞նչ կասես։

— Դո՛ւք զիտաք, ա՛յ որդիք, — ասում ա հերը, — որ յոլա չեք էթում, ամեն օր իրար ոյախսից ձավար եք հավաքում», լավն էն արաժանվեք, ամեն մարդ իրա փայն առնի, էթա՛ իրա հմար տուն դնի, ո՞նց ուզում ա ապրի։

Էս թագավորն ա՛ բերում ա տղեքանցը ամեն մեկին իրա փայը տալի, ճամփու դնում։ Էս աղպորտանցից ամեն մեկը իրա փայն առնում ա, էթում ա իրա հմար ջոկ տուն դնում, պսակվում, տնավորվում, ապրում։ Համա մենծ աղպերը քոմմըքից բեղովվաթ դուս էկավ. իրա փայը տարավ ստղ կերավ, փշացրեց, դրաղին կաննեց։ Դնաց էլ եղ հոր յախեն կպավ, թե իրա փայը աղպորտանց փայիցը քիչ ա էլե, զոռով-ոյուզով էնքամ արեց, որ հորիցը ինչքամ աղաք

էր առե, մի էնքամ էլ հմի առավ: Էլի տարավ կերավ, էն դիհը կան-նեց: Էկավ հորիցը էլի թաղաղան փայ ուզեց, տարավ ըն էլ խժուց, կոմդ արեց, էլ եդ էկավ հոր յախեն կպավ, թաղաղան փայ ուզեց: Մախլաս՝ ըսենց շորս-հինգ հետ փայ ուզեց, տարավ կեր ու խումի տվեց, փշացրեց, մնաց մատը լպստելոն:

Վերջը էս մենծ աղպերը ինքն իրան միտք արեց. «Մի էթամ,— ասեց,— ասսու կուշտը գանգատ, տենամ ես ինչ մեղքի տեր ի, որ իմ մալ ու դոլվաթը ըս էլ քանի հետ ձեռիցս առավ, թողաց աղ-քատ, քյափրի ֆողումը, է՛ն ինչ աղպորտանցս դհա հարստացրեց, դհա մալ ու դոլվաթի տեր շինեց»:

Ճամփի թաղարեք տեհավ, մի քանի ամսվա պաշար վե կալավ, վե կացավ, ընկավ ճամփի՝ դպա ասսու կուշտը:

Էկավ, էկավ, էկավ, մի օր, էրկու օր, իրեք օր, չորս օր, մախ-լասի՝ մի շաբաթ, մի մեշի միշի սրան մի յարտ-փարեն կոխած, քո-սոտ Արշ ուստ էկավ:

Արջը սրան որ տեհավ, հարցրեց.— Թագա՛վորի ցեղ, էդ ո՞ւր ես էթում:

— Էթում եմ,— ասեց,— ասսու կուշտը գանգատ. էնքա՛մ մալ ու դոլվաթ, էնքա՛մ հարստովիյուն ունեի, քոմմա ձեռիցս գնաց, մնացի ըսենց աղքատ, օրեն հացի մուրացկան: Հմի էթում եմ,— ասեց,— ասսու կուշտը, մի հարցնեմ, տենամ մեղքս ի՞նչ ա, որ ինձ էս օրը քցեց:

— Բա՛ս որ ըտենց ա,— ասեց Արջը,— ես էլ իմ դարտը քեզ ասնմ. որ ասսու կուշտը հասնես, իմ դհիցն էլ գանգատ ա՛րա: Էս-քամ տարի ա, — ասեց,— յարա-փարի միշին կորել եմ, ի՞նչ անում եմ, շեմ անում, լավանալու ճար, իլլաճ շինում. մի՛ հարցրա, տես ի՞մ վերջը ի՞նչ պտի ըլնի:

— Ա՛շիս վրեն,— ասեց,— կհարցնեմ. եդ գալիս քեզ մի շու-ղար կրերեմ:

Ըսենց գնաց, գնաց, գնաց, շատն ու քիշն աստոծ գիտա, հա-սավ մի մենծ քաղաք: Էս քաղաքի միշովն անց կենալիս սրան մի մարդ ուստ էկավ:

— Բարո՛վ, թագա՛վորի ցեղ,— ասեց էդ մարդը:

— Բարո՛վ, ասսու հա՛զար բարին,— ասեց թագավորի տղեն:

— էդ ո՞ւր ես էթում,— հարցրեց:

— Էթում եմ ասսու կուշտը գանգատ:

— Որ էթում ես, — ասեց, — ի՞նչ կը լի իմ դժիգն էլ գանգատ անես: Մի եքա գլուխի բաղ ունեմ, — ասեց, — որ ասսու ինչ բար ու նորար ասես միշտն կա: Համա որ գարունքը գալիս ա, ծառերը ծաղկում են, բար բռնում, դեռ շհասած բարը վեր ա տալի: Ասսուն մի հարցրա՛, տես սրա ճարն ի՞նչ պտի ընին

— Լա՛վ, — ասեց թագավորի տղեն, — քու գանգատն էլ տեղ կհասցնեմ:

Ասեց, տվեց անցկացավ: Գնաց, գնաց, գնաց՝ մի օր, էրկու օր, իրեք օր դուս էկավ մի ուրիշ թագավորի երկիր: Էդ երկիր թագավորը սրա գալը որ իմացավ, կանչեց իրա կուշտը:

— Ի՞նչ մարդ ես, — հարցրեց թագավորը, — էդ ո՞ւր ես էթում:

— Ֆլա՛ն թագավորի տղեն եմ, — ասեց, — էթում եմ ասսու կուշտը գանգատ:

— Որ էթում ես, — ասեց, — ի՞նչ կը լի իմ գանգատն էլ տեղ հասցնես: Ես, — ասեց, — էսքամ տարի ա թագավորություն եմ անում, ի՞նչ անում եմ, չեմ անում, ի՞նչ պատիճ ասես տալիս եմ, չեմ կարում ընենց անի, որ իմ երկրումը դողություն, մարդասապանություն լպատահի: Ասսուն իմ դժիգը գանգատ արա՛, տես ի՞մ ճարն ինչ պտի ընի, ո՞նց անեմ, որ կարենամ էս խալիսի հախիցը զա:

— Զո՞վատ աշքիս վրեն, թագա՛վորն ապրած կենա, — ասեց, — քու գանգատն էլ տեղ կհասցնեմ:

Ասեց, տվեց անցկացավ: Գնաց, գնաց, գնաց՝ մի օր, էրկու օր, իրեք օր, մի շաբաթ, էրկու շաբաթ, իրեք շաբաթ, մախլասի՝ մի ամիս, գշեր գնաց, ցերեկ գնաց, լիս գնաց, մութ գնաց՝ հասավ աշխարքի վերջը. Էն ա էթա պտի ծովն ընկներ, աստոծ իրա հրեշտակը զրկեց, որ էթա նրան ճամփից եղ դարձնի, հարցնի, տենա նրա գանգատն ի՞նչ ա: Հրեշտակը գնաց թագավորի տղի աղաքը կտրեց:

— Ի՞նչ մարդ ես, էդ ո՞ւր ես էթում, — հարցրեց հրեշտակը:

— Ֆլա՛ն թագավորի տղեն եմ, — ասեց, — էթում եմ ասսու կուշտը գանգատ: Աղպորտանցիցս բաժանվեցի, — ասեց, — նրանք իրանց փայն առան, գնացին տուն ու տեղ դառան, հարստացան. Ես ի՞նչ ունեի, չունեի՝ կերա, փշացրի, վերջը միտք արի գամ ասսու կուշտը գանգատ, տենամ ի՞նչ մեղքի տեր ի, որ ինձ էս օրը քցեց:

— Ես որ քու շաբթերը քոմմա կտրեմ, — ասեց հրեշտակը, — զա՞րով ես:

— Դա՞րով եմ, — ասեց, — զաթի ես էլ դրա հմար եմ աշխարհ-աշխար, երկրե-երկիր ընկե, որ իմանամ իմ ճար ի՞նչ պտի ըլնի:

— Ե՞ս, — ասեց, — ասսու հրեշտակն եմ. աստօծ ինձ ղրկեց, որ քեզ ասեմ, էթաս էլ եդ քու երկիրը, ընդե կորցրած հարստովթյունդ էլ եդ քու ձեռը կընկնի:

— Ասսու փառքը շա՛տ ըլնի, — ասեց թագավորի տղեն, — ոնց որ հրամայել ա, ընենց էլ կանեմ: Մի ուրիշ գանդատ էլ ունեմ, — ասեց, — ճամփին գալիս մի մեջի միշին մի յարա-փարեն կոխած Արդ ուստ էկավ: «Ո՞ւր ես էթում», — հարցրեց: Ասեցի. «Էթում եմ ասսու կուշտը գանգատ»: «Որ էթում ես, — ասեց, — ինչ կընի իմ դհիքն էլ գանգատ անես. էսքամ տարի յարեն սաղ ջանս վեր ա կալե, ի՞նչ անում եմ, չեմ անում, չեմ կարում լավանա. մի հարց-րա՛, տես իմ ճարն ի՞նչ պտի ըլնի»:

— Էն Արշը, — ասեց հրեշտակը, — որ մի իսան բռնի ուտի, ալ-րիալը նրա յարեն կսպղանա:

— Էդ Հո էդ, — վրա բերեց թագավորի տղեն. — Ճամփին մի քաղաքի միջով անցկենալիս մի մարդ ուստ էկավ: «Ո՞ւր ես էթում, — հարցրեց: Ասեցի. «Էթում եմ ասսու կուշտը գանգատ»: — Որ էթում ես, — ասեց, — ինչ կընի իմ գանգատն էլ տեղ հասցնես. ըսե՛նց, ըսե՛նց, ըսե՛նց գյուլի բազ ունեմ, որ ի՞նչ բար ու նորպար ասես մեջը լիբն ա. համա գարումքը որ գալիս ա, ժառերը ժաղկում են, բարը խակ-խակ վեր ա տալի, մի լոլոկ էլ ա չեմ կարում բե-րանս գնեմ. ասսուն մի հարցրա՛, տես սրա ճարն ի՞նչ պտի ըլնի:

— Էդ մարդի բաղի բարն էլ ընդուր ա վե տալի, որ նրա ամեն մի ծառի տակին մի գյուգյում ոսկի ա ֆորած, էն ոսկու ժանզը չի թողում բարը հասնի: Գնա՛, ասա՛ թող քանդի, էն գյուգյում ոսկիքը հանի, էն վախտը իրա բաղի բարին արժանի կընի:

— Էդ էլ Հո էդ, — ասեց թագավորի տղեն: — Ճամփին մի ուրիշ թագավորությունի միջով անցկացա. էն երկրի թագավորը ինձ կան-չեց, հարց ու փորձ արեց. — Ի՞նչ մարդ ես, — ասեց, — ո՞ւր ես էթում: «Յանան թագավորի տղեն եմ, — ասեցի, — էթում եմ ասսու կուշտը գանգատ»: — Որ էթում ես, — ասեց, — իմ գանգատն էլ տեղ հաս-ցըրա: Ես, — ասեց, — էսքամ տարի ա ըստե թագավոր եմ, ի՞նչ անում եմ, չեմ անում, ի՞նչ պատիճ ասես տալիս եմ, չեմ կարում

իմ երկրի գողությունը, մարդասպանությունը վերջացնի, մի ասսուն հարցրա՛, տես իմ ճարն ի՞նչ պտի ըլնի:

— Էդ երկրի թագավորը, — ասեց հրեշտակը, — կնիկ ա, ընդուր նրա խոսքը կապի շեն զնում. նրա աեղակ որ տղամարդ ըլնի, նրա մի խոսքն էլ ա զիննին չի մնա, արած դիվանն էլ կանցկենառու մարդասպանությունը, գողությունն էլ կվերջանա:

Հրեշտակը էս կասի թե չէ, ալրիալը անէրնութք կընի:

Թագավորի տղեն ասսուն փառք ա տալի, վե կենում, ուրախուրախ իրա էկած ճամփովը եղ դառնում: Գալիս ա, գալիս ա, գալիս ա, հասնում ա էն թագավորի երկիրը: Էթում ա դրան մին-մին նաղ անում հրեշտակի ասածը:

— Դրուստ ա, — ասում ա էդ երկրի թագավորը, — ես կնիկ ևմ, դրա հմար էլ խոսք չի անցկենում: Բաս որ ըտենց ա, — ասում ա, — ա՛րի դու ինձ ա՛ո, իմ տեղը նստի թագավոր, հազիր աստոծ քեզ ինձ զսմաթ ա արե:

— Զէ՛, — ասում ա թագավորի տղեն, — ես պտի էթամ իմ երկիրը, բալի իմ կորցրած հարստությունը, մալ ու դոլլաթը էլ եդ իմ ձեռը բցեմ:

Ասեց, տվից անցկացավ: Էկավ, Էկավ, Էկավ, շատոն ու քիշն աստոծ դիտա, հասավ էն մի քաղաքը: Ման էկավ, էն մարդին գտավ, ասեց, թե աստոծ նրա գանգատին ինչ դիվան ա կտրե: Էն հիբատիրոնչ հիննա գնաց, նրա ծառերի քոքերի տակը փորեց, տեհավ, դորթ որ, ամեն մի ծառի տակիցը հրես մի դյուզյում ոսկի դուս էկավ: Հիբատիրը ուրախանում, աշխարով մին ա ըլնում:

— Թագավորի ցեղ, — ասում ա հիբատիրը, — քեզ մի բան պտի ասեմ, չեմ գիտա անկաշ կանես, թե չէ:

— Ա՛սա, — ասում ա թագավորի տղեն, — իսի՛ չեմ անկաշ անի:

— Չունքի դու ինձ ըսենց մի լավություն արիր, իմ գանգատը տեղ հասցրիր, էս հարստությունի, էս խաղինի տեր դարձրիր, ես էլ ուզում եմ քեզ մի լավություն անեմ: Ես եմ, — ասում ա, — մի մինումար աղջիկ, էլ զադ շունեմ. ա՛րի աղջկանս ա՛ո, դառի ինձ փեսա, ըստե կաց: Իմ էլ հա՛յ-հա՛յը գնացե, վա՛յ-վա՛յն ա մնացե. յեռնելուց եղը էսքամ հարստությունը, մալ ու դոլվաթն էլ կմնա քեզ. քանի սաղ ու կենդանի եք՝ մարդ ու կնիկ կուտեք, կխմեք, դովրան կքաշեք:

— Զէ՛, — ասում ա թագավորի տղեն, — ես ըստե չեմ կարա-

մնա, պտի էթամ էլ եղ իմ երկիրը, իմ կորցրած հարստությունը էլ
եղ ձեռ քցեմ:

Հսենց թագավորի բեդոլվաթ տղեն իրա բախտին քացի տվեց,
Հիքատիրոն առածին անկաջ շարեց, իրա ճամփեն բռնեց, գնաց:
Գնաց, գնաց, գնաց, էն մեշի միջի յարալու Արշին ռաստ էկավ:

— Հը՛, թագավորի ցեղ, — ասեց Արշը, — ասսուն տեհա՞ր, իմ
գանգատն արե՞ցիր:

— Հա՛, — ասեց թագավորի տղեն, — արեցի:

— Բա ի՞նչ ասեց, — հարցրեց Արշը:

— Ասեց՝ թո՛ղ մի իսան բռնի, ուտի, զանի յարեն ալբիալը
կսաղանա:

— Բա՛ս որ ըտենց ա, — ասեց Արշը, — ա՛րի քեզ ուտեմ, հա-
զիր աստոծ քեզ ինձ դսմաթ ա արե. մոտիկը թողած էլ իսի՞ հեռու
ման գամ:

Էս ասեց թե չէ, վրա պրծավ, բեդոլվաթ տղին ձվիդ-ձվիդ արեց,
կերավ: Ուտելու բաշտան յարա-փարեն սաղացավ: Ասսու հրամանն
էր, որ թագավորի բեդոլվաթ տղեն էս յարա-փարեն կոխած Արշին
փայ ըլնի:

